

Վեհափառ Տէր,

Լազարեան ճեմարանն արևելեան լեզուաց, որպէս մեր ժամանակի հնագոյն կրթական հիմնարկութիւն հայոց մէջ, պարտք է համարում ողջունել Զերդ Սրբութիւնը և ի դէմս Զեր ամբողջ հայ տղղին տառերի գիւտի 1500-ամեակի և տպագրութեան 400-ամեակի նշանաւոր օրին:

Մասնակցել լուսաւորութեան այդ մեծ տօնին՝ նշանակում է ճանաչել ս. Սահակի և Մեսրոպ Մաշտոցի երախտիքը ազգի և մարդկութեան առաջ: Պարտքի և զաղափարի այդ առաքեալները տալով ազգին զիրու դպրութիւն՝ հաղորդակից արին նրան աւելի վսեմ քաղաքակրթութեան քրիստոնէական եկեղեցու հովանու տակ: Մեսրոպեան գիւտը բացեց հայի դարերով կապված լեզուն, արթնացրեց նրա ստեղծագործական ոյժերը:

Այս վսեմ գործին պսակ հանդիսացաւ ԽVI դարում հայ տպագրութեան արուեստը, որ միջոց տուեց ժողովրդի լայն խաւերին հաղորդ լինելու գիտութեան, գրականութեան և զեղարուեստի բարիքներին:

Հանդէս եկաւ մի փայլուն կաճառ մատենագիրների, որոնք ճոխացրին մայրենի լեզուն և գրականութիւնը: Մեսրոպեան սքանչելի գիւտը հնարաւորութիւն տուեց հայ ազգին կատարել մի վեհ առաքելութիւն՝ քաղաքակրթութեան և քրիստոնէական լուսոյ հաղորդիչ հանդիսանալ Առաջաւոր Ասիայում:

Պահպանելով իր մեծ հիմնադիրների աւանդներն և աշխատելով հայ ազգի լուսաւորութեան նոյն անդաստանում, Լազարեան ճեմարանն իր այդ սպասաւորութեամբ հանդիսանում է իրեն շարունակող այն մշակների գործի, որոնք 1500 տարի առաջ վառեցին հայոց մէջ մեծ գիտութեան սրբազն հուրը, իսկ ԽVI դարում նոյնը փայլեցրին հայ ժողովրդի բոլոր շրջաններում:

Այս գիտակցութեամբ Լազարեան ճեմարանը այս նշանաւոր տօնին միացնում է իր ձայնը հոչակելու որպէս ս. Սահակի և ս. Մեսրոպի, նոյնպէս և առաջին հայ տը-